
ARDVI
VILLAGE RESORT

# Տուրիզմը Հայաստանում

Վերջին 3 տարիների ընթացքում  Հայաստանում նկատվում է էկոտուրիզմի և գյուղական հանգստի ոլորտների բուռն աճ և տարածում: Երկրի հարուստ պատմամշակութային և բնական ռեսուրսները, յուրահատուկ կրոնական և մշակութային ժառանգությունը մեծ ներուժ են ստեղծում զբոսաշրջիկների համար բարձրորակ սպասարկմամբ տուրիզմի  տարբեր մրցակցային ուղղություններ կազմակերպելու համար:

Հայաստանը յուրօրինակ տուրիստական վայր է դառնում իր հարուստ և բազմազան մշակութային ժառանգության շնորհիվ, ներառյալ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից  ճանաչված համաշխարհային ժառանգության վայրերը, միջնադարյան վանքերը, եկեղեցիները, բերդերը:

# ՀԱՅԱՍՏԱՆ ԱՅՑԵԼՈՂ ԶԲՈՍԱՇՐՋԻԿՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԸ

(ԱՂԲՅՈՒՐ: ԱՐՄՍՏԱՏ, ԸՍՏ ՄԱԿ-Ի ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ (ԶՀԿ) ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ)



# Տուրիզմի պատկերն ըստ երկրների



# Ծրագրի կոնցեպտը

Պատկերացրեք Երկրի վրա մի վայր, որտեղ կարող եք ստանալ լավագույն սպասարկումն ու միաժամանակ զգալ լիակատար գյուղական հանգստի հաճույքը: Այս ամենը բնութագրում է **Արդվի Գյուղ Ռեզորթը**:

Լոռվա մարզի հիասքանչ բնությունը,  աննկարագրելի լանդշավտը, մշակութային ժառանգությունը յուրաքանչյուր անկյունում կպարգևի մտավոր ու ֆիզիկական հանդարտություն այցելուներին:

Արդվի Գյուղ Ռեզորթում Դուք կհանդիպեք հայերի հայտնի հյուրընկալությունը, կհամտեսեք ճաշատեսակներ պատրաստված տեղական արտադրության մթերքից, կվայելեք տարատեսակ զվարճանքները:

# Համայնքային ծրագիր




«Արդվի Գյուղ Ռեզորթ» անունն արտացոլում է բնությունը, տեղանքը և ամենակերևորը այն ոգեշնչումն ու փիլիսոփայությունը, որն ի սկզբանե ուղղորդում է աշխատանքները: Ծրագրի հիմնական նպատակն է ստեղծել սոցիալական ձեռնարկատիրության կայուն մոդել, որի նպատակը ոչ միայն շահույթի հետապնդումն է, այլ նաև Արդվի համայնքի ուղղակի ներգրավվածությունը բազմաֆունկցիոնալ հանգստավայրի ստեղծման գործում՝վերջնական նպատակ ունենալով զարգացնել տուրիզմը Լոռվա մարզում և ընդհանրապես՝ Հայաստանում:

# Աշխարհագրական դիրք (քարտեզ)







# Կառուցվածք

Ռեզորթում նախագծված են հետևյալ մոդուլները, որոնք փոխկապակցված են և նպատակ ունեն բավարարելու հյուրերի նախասիրությունները.

- Լյուքս վրանների գոտի
- Ֆուդ-կորտ (ռեստորան/սրճարան)
- Հյուրատուն բոլոր սեզոնների համար
- Ազատ վրանային գոտի
- Խարույկի մոտ ասել-խոսելու շրջան
- Ակտիվ սպորտային մոդուլ
- Բացօթյա կինոդահլիճ

# Լյուքս վրանների գոտի

(նմանատիպ օրինակներ)







Առաջնային անհրաժեշտության իրերով կահավորված վրաններ, տնային հարմարավետություն ստեղծելու համար:

# Ֆուդ-կորտ (ռեստորան/սրճարան)










MAX GROSS
TARE
NET
CU.CAP
NA










©Bill L. Coulter - 2017

# Ակտիվ սպորտային մոդուլ







# Սինեմա աստղերի ներքո



Այցելուները հնարավորություն կունենան դիտել լավագույն ֆիլմերը աստղերի ներքո, Արդվիի հիանալի սարերի գոգին:





# SWOT Վերլուծություն

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
| --- | --- |
| - Զբոսաշրջիկների թվի աճը, հատկապես Սփյուռքից<br>- Տեսարժան վայրեր, ամառային և ձմեռային հանգստի հնարավորություն, հիանալի եղանակ աշնանը և գարնանը<br>- Էկո-, գյուղական և արկածային տուրիզմի մեծ հնարավորություններ<br>- 20 հազ. քմ սեփականաշնորհված տարածք | - Օդային տրանսպորտի բարձր գներ<br>- Տուրիզմի առկա ցածր զարգացվածություն Լոռվա մարզում<br>- Գյուղական համայնքներում՝ պրոֆեսիոնալ աշխատուժի ցածր մակարդակ |
| **Հնարավորություններ** | **Սպառնալիքներ** |
| - Հարուստ պատմամշակութային ժառանգություն (հինավուրց եկեղեցի, տեղական մի շարք լեգենդներ և այլն)<br>- Տեղանքի բարենպաստ լանդշաֆտ տուրիստական նախագծի համար<br>- Տեղական գյուղմթերքի վաճառքի պլանավորված մեխանիզմներ<br>- Մոդելային Էկոգյուղի ստեղծման հնարավորություն հետագա կրկնօրինակման համար | - Թափոնների կառավարման մեխանիզմների թերզարգացվածություն տարածաշրջանում<br>- Ինֆորմացիոն ցուցանակների սակավաթվություն |

# Թիմ



## Սամվել

*Մեր նախագծի շարժիչ ուժը: Հյուրանոցային և ռեստորանային բիզնեսում ունի առավել քան 20 տարվա փորձ: Կինոարտադրության մեծ վարպետ:*



## Տիգրան

*Պատասխանատու է առաջխաղացման և մարքեթինգի համար: Առավել քան 10 տարվա փորձ թվային մարքեթինգի և գովազդի ոլորտում:*



## Արտեմ

*Պատասխանատու է սննդի և խմիչքի սեկտորի համար: Առավել քան 10 տարվա փորձ գինու և տուրիզմի ոլորտներում:*





## Արեն և Զոր

# Շուկայի հնարավորություններ



# Թիրախային խմբեր

**ԽՈՒՄԲ 1 -  Կյանքը վայելող սերունդ**

20-35 երիտասարդներ (թե՛ տեղացի, թե՛ արտասահմանցի), ովքեր փնտրում են ակտիվ և արկածային տուրիզմի տարբերակներ:



**ԽՈՒՄԲ 2 – ՏԱՐԵՑ բայց ԹՐԵՆԴԻ ՄԵՋ**

Սուպերակտիվ տարեց տուրիստներ, ովքեր փնտրում են առողջարար հանգստի մթնոլորտ և ովքեր սիրում են հեծանիվ քշել և կիլոմետրներով քայլել:



**ԽՈՒՄԲ 3 - Քայլողներ**

Պրոֆեսիոնալ քայլարշավորդներ, ովքեր պատրաստ են ամեն առավոտ 5 կմ քայլել, որպեսզի ըմպեն առավոտյան սուրճը... օրգանական սուրճը:



ARDVI
VILLAGE RESORT

## Քեմփինգը դեռ երբեք այսքան զվարճալի չի եղել:

Առավել մանրամասն տեղեկությունների համար կարող եք կապ հաստատել մեզ հետ.

Էլ.փոստ: tigran.parseghyan@gmail.com
Կայք: www.ardvi.com (coming soon)
Հեռ.: (+37455) 77-33-75
facebook: @ardviresort (coming soon)